ԳՈՐԳԻ ՕԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց սեղ գորգերի կենցաղավարման հետ կապված մեր ուսումնասիրությունները, ի թիվս առօրյա ոլորտների, բացահայտում են նաև սովորույթներ, որոնք առնչվում են հնամենի ծիսամոգական պատկերացումների հետ: Այդպիսիք, մասնավորապես, դիտարկվում են հարսանյաց և թաղման արարողություններում, հյուրընկալման ծեսում, գորգ գործելու ընթացքում և այլն:

Հնամենի գորգի ծիսապաշտամունքային նշանակության մասին արդեն ենթադրել են մի շարք ուսումնասիրողներ: Միայն գորգի գեղազարդման համակարգում կայուն տեղ ունեցող խորհրդանշանների ու դրանցից կազմված ոճավորված ավանդական հորինվածքների և գորգադաշտը երիզող գոտիների առկայությունն արդեն իսկ առիթ է տարբեր վարկածներ առաջ քաշելու համար: Հարկ ենք համարում նշել, որ մասնավորապես այս տեսակետից առանձնահատուկ են հայկական գորգերը:

Հնամենի գորգի ծիսապաշտամունքային դերի բացահայտման համար, մեր կարծիքով, ճիշտ չէ միայն գեղազարդման մանրամասների մեկնաբանությամբ սահմանափակվելը: Մասնավորապես, հաշվի ենք առնում, որ հորինվածքների և առանձին զարդանախշերի իմաստային բովանդակության ուսումնասիրման արդյունքներին սովորաբար բնորոշ են վերացականությունն ու ուսումնասիրողի երևակայության գերակայությունը, որոնք, ինչքան էլ հիմնավորվեն տեսական պատկերացումներով, այնուամենայնիվ, ամբողջությամբ չեն բացահայտում բուն առարկայի ծիսամոգական հատկանիշներն ու դրանց կապը տվյալ էթնոսի հնամենի պատկերացումների հետ:

Այս պարագայում առանձնապես կարևորում ենք պատկերային ու գրավոր աղբյուրները, որոնք ուսումնասիրողին հնարավորություն են տալիս տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող կոնկրետ նյութերի օգնությամբ վերականգնել հնամենի ծեսի երբեմնի նկարագիրն ու մեկնաբանել դրա առանձին ատրիբուտների խորհուրդը:

Գորգի ծիսապաշտամունքային նկարագրի բացահայտման համար ի մի ենք բերել բազմաբնույթ սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ այդ թվում Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններից հավաքած դաշտային ազգագրական նյութեր, որոնք, մեր կարծիքով, լրացնում են իրար և հնարավորություն տալիս զերծ մնալ միակողմանի մեկնաբանություններից:

Այս առումով ուշագրավ է մեռոնեփի ծեսը, որի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XVII դարի թուրք ուղեգիր Էվլիա Չելեբին: Իբրև ականատես նա գրում է. «Այստեղի լեռան ամենաբարձր գագաթին, կանաչազարդ մարգագետնում, նրանք փռում են իրենց հնագույն գորգը: Լեռներում աճող բոլոր ընտիր տեսակի ծաղիկները, բույսերը և խոտերը հավաքում ու լցնում են մի մեծ կաթսայի մեջ: Մի եռոտանի են դնում գորգի վրա և շատ ուժեղ կրակ վառում»[1]: Մի այլ առիթով, կրկին լինելով Էջմիածնում, այս ուղեգիրը նորից է գրում մեռո-

---

1 *Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, թուրքական աղբյուներ. հ. 4, Երևան, 1969, էջ 68-69*

նեփի մասին, որի կրակը վառել էին մետաքսյա գորգի վրա[2]: Կրակից գորգի անվնաս մնալը վանականները ուղեգրին բացատրել են նրանով, որ գրա վրա ժամանակին ծնվել էր Հիսուս Քրիստոսը: Նրանք պատմել են նաև, որ այդ գորգի վրա հրեաները, ըստ իրենց հասած ավանդության, վերակենդանացրել էին մահացած մարդու[3]:

Մեռոնեփի ծիսակարգում գորգի առանձնակի նշանակության մասին նշել է նույն ժամանակաշրջանում ապրած թուրք մեկ այլ ուղեգիր ևս՝ Քյաթիբ Զելեբին: Նա հաղորդում է, որ մեռոն եփելու համար սարերի գագաթներից հավաքում էին քառասուն տեսակի ծաղիկ, լցնում մեծ կաթսայի մեջ, ծածկում գորգով և քառասուն օր պահում վանքում[4]:

Հարցի ուսումնասիրության առումով, այստեղ կարևորում ենք գորգի վրա Քրիստոսի ծնվելու հետ կապված ավանդույթը, որն ակնհայտորեն ունի նախաքրիստոնեական ծագում, ու առնչվում է մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքի հետ: Դա հնարավորություն է տալիս մեկնաբանել հանգուցյալին գորգի վրա դնելու, ինչպես նաև դամբարաններում գորգի ղետեղման պատճառները:

Ակնհայտ է, որ 1232 թ. ստեղծված Թարգմանչաց ավետարանի «Աստվածամոր նինջը» մանրանկարում Աստվածամոր դագաղի տակ դրված գորգը նույնպես առնչվում է «սրբաղան» գորգի հետ կապված հնամենի պատկերացումներին[5]: Այս կապակցությամբ խորհրդանշական է հայոց գորգագործական մի շարք տարածաշրջաններում ընդունված գորգաղաշտի «տափ» անվանումը[6]: Հայտնի է, որ այս բառը «դետին», «հող» բառերի հոմանիշն է, և այսքանով էլ արդեն ենթադրվում է գորգաղաշտը կենսաբեր հողի խորհրդանիշ ընկալելու հանգամանքը: Բայց հայտնի է նաև գորգաղաշտը «թախտ», այսինքն՝ գահ, դահավորակ կոչելը:

Միաժամանակ, աղբյուրներից պարզվում է, որ բոլոր դեպքերում չէ, որ գորգաղաշտը «տափ» էին անվանում: Գորգագործությամբ հայտնի Դողթան գավառի Փառակա գյուղից Վայքի Եղեգիս գյուղում հաստատված վտարանդի գորգագործուհի Եղիզաբեթ Հարությունյանի պատմելով՝ Դողթան գավառում միայն կարմիր լինելու դեպքում էին գորգաղաշտը «տափ» կամ «թախտ» անվանում՝: Այս նույն աղբյուրի վկայությամբ, հայկական գորգերին առհասարակ բնորոշ էր կարմիր հիմնագույնը[8]: Դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ այդ սովորույթը հայտնի էր նաև Վայքում, Վարանգայում ու գորգագործական այլ կենտրոններում:

Հայկական գորգերի գունային առանձնահատկություններին վերաբերող նշումներ կան նաև միջնադարյան աղբյուրներում: Արաբ պատմիչ Մակրիզին X դարի կեսերին նկարագրելով Կահիրեի շուկան, հիշատակում է հայկական գորգերի մասին, որոնք այդտեղ և առհասարակ խալիֆաթի ընդարձակ տարածքում հայտնի էին «կրրմզ» անունով: Այդպես կոչելը Մակրիզին բացատրում է հայկական գորգերում կարմիր դույնի գերակշռությամբ[9]:

---

2 Նույն տեղում, էջ 121:

3 Նույն տեղում, էջ 69:

4 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. կազմեց՝ Ա. Խ. Աֆրաստյան. Երևան, 1964, էջ 26-27:

5 E. Korkmasian, I. Drampian, H. Hakopian. La Miniature Armenienne, L., 1984, pl. 9:

6 Ա. Պողոսյան. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ). տետր 1, էջ 64, 90. տետր 2, էջ 105:

7 Նույն տեղում, տետր 2, էջ 64, 105:

8 Նույն տեղում, էջ 104-105:

9 А. Мец. Мусульманский ренессанс. М.,1976, с. 362.

Այսպիսով, հանգում ենք երկու կարևոր հետևությունների՝ առաջինը, որ գորգագաշտը համադրվում էր «հող», «գետին», «գահ» հասկացության հետ (դա առավելապես վերաբերում էր կարմիր հիմնագույն ունեցողներին), և երկրորդ, որ հայկական գորգերը ավանդաբար բնորոշվել են կարմիր հիմնագույնով:

Բայց ի՞նչ է իրենից ներկայացնում գորգի հանելուկային աշխարհը առհասարակ և ինչպես էր այն ընկալվում հայ հանրույթի ենթագիտակցական համակարգում: Ըստ էության, այդ աշխարհի համապարփակ պատկերը ներկայացված է XIX դարի վերջում Ներքին Բասենի Արմտլու գյուղի գորգագործուհի Սոֆիայի հորինած երգերից մեկում, որտեղ մասնավորապես ասվում է.

...Իմ գորգը մի նախշուն երկինք է, գույնզգույն ասաղերով լեցուն
Շնորհքն երկինքն է տվել, փառք տամ երկնքին, աստծուն:
...Աշխարհն եմ ես այստեղ դրել Մասիսն ու սիրտս վրեն
Ամեն մի նախշի, թելի մեջ Հայաստան անունն եմ դրել...[10]

Վերը բերված նյութերից երևում է, որ հայ հանրության ենթագիտակցական համակարգում պահպանվել է աշխարհընկալման հնամենի մի ձև, որի առարկայական, պատկերավոր վերարտադրություններից մեկն էլ հանդիսացել է նախնական գորգը:

Դա մի երևակայական աշխարհ է, որտեղ դաշտի կենտրոնական հորինվածքի և դրա նկատմամբ ասիմետրիկ պատկերված եզրային հորինվածքների միջոցով ներկայացվում է երեք աշխարհների միասնությունը, որով ինքնին խորհրդանշվում է կյանքի և բնության հավերժության գաղափարը: Դա անարատ և արգասաբեր մի տարածք է, որը չարի ներգործությունից պաշտպանվում է մոգական եզրագոտիներով, որոնց գեղազարդման համակարգում ընդունված էին գալարանախշեր, ատամնազարդ կամ կեռիկաղարդ գունաշերտեր, աստղաձև, խաչաձև, օձագալար, պայտաձև նախշեր: Դրանք բոլորն էլ ժողովրդական պատկերացումներում չարախափան են ու ըստ էության նախատեսված են գորգագաշտը՝ այդ սրբազնացված տարածքը, չար աչքի ներդործությունից պաշտպանելու համար: Մենք հիմք ունենք տյդ հանգամանքը արձանագրելու՝ հաշվի առնելով թեկուզ և միայն այն, որ մասնավորապես գորգի եզրագոտիներում եղած պայտաձև նախշը Վայքում մեր ժամանակներում էլ հայտնի է «գաղդդան նախշ» (այսինքն հմայիլ, պահպանակ) անունով:

Եվ հենց չար աչքից պաշտպանված տարածքում է, որ կարող էր ստեղծվել անարատ ու կենսատու խմիչքը՝ սրբազան մեռոնը: Այդպիսի մի կենսատու տարածքում է ծնվում մեռնող և հարություն առնող բնությունը խորհրդանշող առասպելական կերպարը, և Էվլիա Չելեբու վերը հիշատակած գորգի վրա Քրիստոսի ծնվելու մասին ավանդությունը, մեր կարծիքով, հենց այդ պատկերացումների արձագանքն է:

Նորից անդրադառնալով այդ ավանդությանը, հարկ ենք համարում արձանագրել, որ դրանում եղած գորգի ծիսապաշտամունքային ոլորտներին վերաբերող հիշատակությունները, բարեբախտաբար, ունեն նաև պատկերային վկայություններ: Վասպուրականի մանրանկարչական դպրոցներից մեկում կատարված մի մանրանկարում ներկայացված է Քրիստոսի Ծնունդը[11]*: Նորածինը այդ մանրանկարում պատկերված է գորգի վրա, բայց առավել կարևորն այն է, որ այդ գորգի հիմնագույնը կարմիր է:*

---

10 Գ. Հ ա կ ո բ յ ա ն. *Ներքին Բասենի ազգագրությունը. Երևան, 1975, էջ 395:*

11 Г р. А к о п я н. Миниатюра Васпуракана, XIII—XV вв., Ереван, 1984, табл. 17.

Ծիսաառասպելական գորգը, լինելով մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշ, ըստ հնամենի պատկերացումների, բնականաբար, պետք է նաև կյանք տար մահացածներին: Ուշագրավ է, որ այս պատկերացումը նույնպես արտացոլված է հայոց մանրանկարներում: 1379 թ. Խիզանում (Վասպուրական) կատարված մի մանրանկարում ավետարանական թեմաներից հայտնի Ղազարոսի հարության տեսարանում վերջինս նստած է գորգի վրա[12]: Հիշեցնենք, որ Թարգմանչաց Ավետարանում էլ Աստվածամայրը պատկերված էր գորգին պառկած:

Բավարարվելով այս օրինակներով կարող ենք եզրակացնել, որ պատահական չեն դամբարաններում գորգերի մնացորդների հայտնաբերման փաստերը, ինչպես և պատահական չեն հետագայում՝ ընդհուպ մինչև մեր դարի սկզբները, հանգուցյալին գորգի կամ կարպետի մեջ փաթաթելու, իսկ մեր ժամանակներում՝ հանգուցյալի դագաղի տակ գորգ փռելու սովորությունը[13]: Պատահական չէ նաև հարսանյաց հանդեսի ժամանակ հարսի և փեսայի թիկունքում պատից գորգ կախելու սովորությունը հայոց մեջ: Հայտնի է, որ այս արարողակարգի շարքում, Գողթան գավառում, դրանից բացի, փեսայի տան մուտքի մոտ, նորապսակների ոտքերի տակ նաև գորգ էին փռում[14]: Այս ամենը, փաստորեն, հայոց ենթագիտակցական համակարգում պահպանված սովորություններ են, որոնցում արտացոլված են առասպելական գորգի արգասաբեր լինելու հնամենի պատկերացումների արձագանքները: Արգասաբեր, ծիսաառասպելական գորգը պետք է մոգականորեն օժանդակի նորապսակների արգասավորությանը: Ի դեպ, այս պատկերացումը դրսևորվում է նաև գորգը տորքից (գորգ գործելու հարմարանք) հանելու ժամանակ, երբ վարպետը ավելացված հենքաթելերը կտրելով ճեղք էր բացում, և չբեր կանայք արգասավորվելու ակնկալությամբ անցնում էին այդտեղով ու պառկում գորգի տակ[15]:

Այստեղ պետք է նորից անդրադառնանք վերը բերված երգին և ուշադրություն դարձնենք գորգ գործելու հմտությունը աստծո կողմից տրված շնորհ լինելու մասին եղած պատկերացմանը: Փաստորեն հանրության ենթագիտակցական համակարգում, XIX-XX դդ. էլ, գորգագործությունը դեռևս ծես էր: Այդտեղ առկա էր ծեսի ղեկավարը, կատարվում էին ավանդական արարողությունները (տարածքի չարազերծում, ծիսական հացկերույթ և նվիրատվություններ՝ հենքը պատրաստելուց և ապա գործելը ամբողջությամբ ավարտելուց հետո, բուն աշխատանքն ուղեկցող երգերը, վարպետի՝ ծեսի ղեկավարի կողմից նախշերի ու դույների թելադրելը և այլն), որոնք բոլորն էլ աղերսվում են հնամենի գորգի ծիսապաշտամունքային հիմնական իմաստին՝ կյանքի և բնության հավերժության գաղափարին:

Այսպիսով, ի սկզբանե, գորգագործը առասպելականացված հերոս էր, օժտված մոգական, ի վերուստ տրված կարողությամբ: Եվ գորգ գործելն էլ մի ծես էր, որը ավարտվում էր սրբազան գորգի առասպելական ծննդով և դրա հետ կապված ծիսական հացկերույթով: Եվ ծեսի ղեկավարը՝ քուրմը կամ ցեղի հոգևոր առաջնորդը ինքը՝ գորգագործ վարպետն էր: Բասենցի գորգագործուհուն վերադրվող երգը հնամենի, սրբազնացված գորգի առասպելական ծննդին նվիրված լեգենդի հեռավոր մի արձագանք է, որը հնարավորություն է տալիս մի անգամ ևս հաստատելու գորգը ի

---

12 E. Korkmasian. I. Drampian, H. Hakopian. Op. cit., pl. 4.

13 Ե ռ. Լ ա լ ա յ ա ն. Մուշ և Տարոն. — «Ազգագրական հանդես», գիրք 27, Թիֆլիս, 1916, էջ 189:

14 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Գողթան գավառ. — «Ազգագրական հանդես», գիրք 7-8, Թիֆլիս, 1901, էջ 121:

15 Կ. Մ ե լ ի ք - Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն ց. Բուրդ գնելը և գորգ գործելը Վանաբաղում. — «Հանդես ամսօրյա», 1928, N 9-10, էջ 476-477, ԴԱՆ, տետր 1, էջ76. տետր 2, էջ 102:

սկզբանե ծիսաառասպելական առարկա լինելու մեր տեսակետը: Ավելին, այդտեղ հստակորեն դիտարկվում է նաև գորգի սրբազնացած տարածքի և «հայրենիք» հասկացության նույնացման գաղափարը:

Ակնհայտ է, որ ծիսաառասպելական գորգը, ըստ էության, մի տարուացված առարկա էր, որը օգտագործվում էր միայն ծիսական հատուկ արարողությունների ժամանակ: Բնականաբար, այդպիսի սրբազան տարածքը աստվածային է, և այդտեղ կարող են բազմել միայն աստվածաշնորհ իշխանությամբ օժտված հոգևոր և ռազմական առաջնորդները: Այդպիսով, դա աստվածային գահավորակ էր, ապահով և չարազերծ, ուստի բոլորովին պատահական չէ, որ միջնադարի հայ նշանավոր քանդակագործ, հարտարապետ և մանրանկարիչ Մոմիկը, XIV դարի առաջին քառորդում, Արենիի և Ամաղուի վանքերի կենտրոնական մուտքերի տիմպաններին Աստվածամորը պատկերել է գորգ-գահավորակի վրա բազմած[16]: Հայոց մեջ, սովանդական վարվելակարգում ընդունված է հարգարժան հյուրերի համար գորգեր փռելու, հյուրին գորգին բազմեցնելու սովորությունը: Որոշ պատմաազգագրական շրջաններում, հատուկ այդ նպատակով, սնդուկներում պահված գորգեր էին հանում: Մեր կարծիքով, այս դեպքում էլ կարևորվել է սրբազնացված տարածքի նաև չարազերծ լինելու գաղափարը: Դա վստահություն ներշնչող տարածք է: Հայոց մեջ եղած այդ պատկերացումը ի նկատի ունենալով էլ Մսրա Մելիքը, դավադրաբար, Դավթին հրավիրում է վճռական մենամարտից առաջ բազմել ու հանգստանալ վիհի բերանը ծածկող գորգին[17]:

Բնականաբար, ինչպես արդեն վերը նշվեց, այսպիսի առարկան մատչելի չէր բոլորի համար, և նույնիսկ զարգացած միջնադարում գորգը համարվում էր իշխանության խորհրդանիշ և հասու էր միայն վերնախավին: Դա հարստության, հասարակության մեջ գրաված դիրքի չափանիշ էր: Այս առնչությամբ կարևոր ենք համարում շեշտել, որ այս դեպքում խոսքը առաջին հերթին վերաբերում էր հայկական գորգերին:

Առհասարակ, միջնադարում, ազգամաքաղաքական բնույթի տարաձայնությունները լուծելու, տիրակալների հետ հարաբերությունները նորմալացնելու նպատակով տրվող նվերների թվում որոշիչը հայկական գորգերն էին, որոնք, ի դեպ, հենց խալիֆաթի հսկայական տարածքում «հայկական» անունով էլ հայտնի էին[18], մինչդեռ գորգագործական այլ կենտրոններին վերաբերող գորգերը հիշատակվում են առանց էթնիկական պատկանելությունը շեշտելու:

Ինչպիսի՞ն էր սրբազնացված, առասպելական գորգի գեղազարդման համակարգը: Այս առնչությամբ քիչ բան է հայտնի: Մեր ունեցած տվյալներից հնարավոր է միայն հստակորեն ենթագրել, որ հնամենի գորգի սրբազնացված տարածքին բնորոշ է եղել կարմիր հիմնագույնը: Դրանով ենք բացատրում Գոգթան գավառում միայն կարմիր գորգադաշտը «թախտ» կամ «տափ» անվանելը: XVIII-XX դդ. վերաբերող հայկական գորգերին կարմիր հիմնագույն բնորոշ լինելու ավանդույթը, անկասկած, ունի հազարամյակների պատմություն: Համենայնդեպս, միջնադարում հայկական գորգերին «կարմիր» անվանումով կոչելը մատնանշում է, ինչպես նշվեց, դրանց գունային համակարգում կարմիրի գերակշռության

---

16 L u s i D e r M a n u e l i a n and M u r r e y L. E i l a n d. Wearvers, Merchants and Kings. The inschribeds Rugs of Armenia.Vort Worht, 1984, p. 22; R. K e v o r k i a n, B. A c h g j i a n. Tapis et textiles Armeniens. Marsell, 1991, ill. 30.

17 *Մ ա ս ն ա ն գ ի Դ ա վ ի թ. Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները Ս. Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն ի, Երևան, 1981, էջ 233:*

18 А. М е ц. Указ. соч., 362—364; А б у - л Ф а з л Б е й х а к и. Материалы по истории туркмен и Туркмении. Т. I, арабские и персидские источники VII—XV вв., М.—Л., 1938, с. 238; В. В. Б а р т о л ь д. Соч., т. I, М., 1963, с. 345—346.

փաստը, և հիմնավորում է մեր այդ ենթադրությունը: Զմոռանանք նաև, որ նորածին Հիսուսը պատկերված էր կարմիր հիմնագույնով գորգի վրա, և դա միակ օրինակը չէր, որ կարող ենք բերել միջնադարյան հայկական մանրանկարներից: Ի թիվս այլոց, հիշատակման արժանի է Մուղնու 1053 թ. կատարված Ավետարանի խորհրդավոր ընթրիքը ներկայացնող մի մանրանկար, որտեղ Հիսուսն ու տասներկու առաքյալները նստած են կարմիր գորգի վրա դրված սեղանի շուրջ[19]: 1287 թ. Կիլիկիայում կատարված Ավետարանում Մկրտելու տեսարանը նույնպես պատկերված է կարմիր գորգի վրա[20]: Կարմիր գույնի առնչությամբ նշենք, որ հայոց ավանդական պատկերացումներում այն առհասարակ համարվում էր պտղաբերության և արգասավորության խորհրդանշաններից մեկը: Այս կապակցությամբ նշենք, որ հայոց հնագույն էպիկական ստեղծագործություններից մեկում, ուր ներկայացված է Վահագնի ծնունդը, ասվում է.

Երկնէր երկին,երկնէր երկիր
Երկնէր եւ ծովը ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և դկարմրիկրն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վաղէր խարտեաշ պատանեկիկ...[21]

Այսպիսով, կարմիր գույնը հայոց հնամենի հավատալիքներում ընդունված էր իբրև արգասավորության և արգասավորելու խորհրդանիշ: Մեր այս ենթադրության համար բավարար հիմք են հանդիսանում կարմիրի ներկայությունը Վահագնի հայոց ռազմի աստծու ծնվելու ծիսակարգում, որտեղ եղեգը պետք էր որ կարմիր լիներ, կարմիր հիմնագույնով գորգադաշտն արդեն մեր ժամանակներում «թախտ» կամ «գահավորակ» կոչելը ավանդապաշտ Գոզթան գավառում, այդ կարգի գորգերի ճանաչված ու վերնախավային լինելու պարադան միջնադարյան Հայաստանում և վերջապես նույն՝ հայոց միջնադարյան մանրանկարներում կարմիր հիմնագույնով գորգի ներկայությունը առասպելական ծննդի, հարության և համբարձման տեսարաններում: Առասպելական, ծիսապաշտամունքային գորգի երբեմնի գեղազարդման համակարգի կամ դրա հիմնական հորինվածքների մասին պատկերացում են տալիս հայոց բնորոշ գորգերի մի շարք տիպեր, որոնք փաստորեն մեր ժամանակներում նեկայանում են իբրև աշխարհընկալման հնամենի պատկերացումների ավանդակիրներ:

Շեշտելով նորից, որ առավելապես հայկական գորգերին է հատուկ գեղազարդման ոզջ համակարգի ոճավորվածությունը, գտնում ենք, որ արդեն այդքանով ենթադրվում են դրանց ծագման վաղագույն ակունքները: Նախշի կամ հորինվածքի միջոցով բնության մեջ կատարվող երևույթները յուրահատուկ աշխարհընկալմամբ պատկերագրելու գորգերի գեղազարդման համակարգին բնորոշ ձևերը համադրելի են ժայռապատկերային արվեստի հետ: Գորդերի, մինչև մեր ժամանակները հարատևած տիպերի գեղազարդման համակարգում տեղ գտած հիմնական հորինվածքներ և առանձին զարդանախշեր, անտարակույս, ունեն խոր ակունքներ և կրում են որոշակիորեն խորհրդանշված, ոճավորված, իմաստային բեռնվածություն: Մասնավորապես, մեր կարծիքով, նման տիպերի շարքում առանձնապես կարևորվում է «Լոռի-Փամբակ» տիպը: Այս տիպի բոլոր տարբե-

19 Т. И з м а й л о в а. Армянская миниатюра XI века, М., 1978, с. 64.

20 Матенадаран, том I, Армянская рукописная книга VI—XIV веков, составители и авторы текста С. С. М а н у к я н, В. О. К а з а р я н. М., 1991, с. 178.

21 *Հայ դասական քնարերգություն. երկու հատորով, հ. 1, կազմեցին և ծանոթագրեցին՝ Լևոն Մկրաչյան, Արշակ Մադոյան. Երևան, 1986, էջ 79:*

բակների գորգերի գեղազարդման համակարգում իշխողը խաչի խիստ ոճավորված պատկերն է: Անշուշտ, պատկերված հորինվածքը կարելի է մեկնարանել մի քանի տարբերակներով, որոնք ուսումնասիրողների կողմից կարող են համարվել ընդունելի կամ անընդունելի: Մեզ համար առավել կարևոր է, որ այդտեղ գործ ունենք աշխարհընկալման մի յուրահատուկ, պատկերային մատուցման հետ, որը նաև համահունչ է վերը հիշատակված աղբյուրներում ուրվագծված ծիսապաշտամունքային գորգի «սրբազնացված տարածք» հասկացությանը: Դա այդպես է, քանի որ այդ տիպին բնորոշ խաչը ծաղկած խաչն է՝ մեռնող և հարություն առնող բնության խորհրդանիշներից մեկը: Ինչպես հայտնի է, խաչը հետագայում դարձավ Հիսուսի՝ մեռնող և հարություն առնող քրիստոնեացված աստծու կերպարի խորհրդանիշ, որի առասպելական ծնունդը կատարվել էր հենց գորգի վրա:

Հետևաբար, հիմք ունենք «Լոռի Փամբակ» տիպի հիմնական հորինվածքը համարելու հնամենի ավանդույթներ կրող և երբեմնի ծիսապաշտամունքային գորգի գեղազարդման համակարգին բնորոշ մեզ հասած մի տարբերակ:

Անտարակույս, գեղազարդման վաղեմի ավանդույթներ են կրում վիշապագորգերի՝ վիշապի ոճավորված պատկերներով գեղազարդված գորգերի բոլոր տարբերակները: Համենայնդեպս, «Աստվածամոր Նինջը» պատկերող մանրանկարում եղած գորգի գեղազարդման համակարգի հիմնական տարրը վիշապի ոճավորումների օձագալար պատկերներն են: Ղազարի հարությունը պատկերող Ռստակեսի մանրանկարում վերջինիս նստած գորգի հիմնական հորինվածքը կեռախաչն է, սվաստիկան՝ արևի և հավերժության խորհրդանիշը:

Բերված օրինակները կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բավարար է, որպեսզի հանգենք մի եզրակացության, ըստ որի հնամենի ծիսապաշտամունքային գորգի տարածքը «սրբազնացվում» էր որոշակի խորհրդանշանների միջոցով: Մեր գիտարկումներից պարզվում է, որ գրանք կյանքի հավերժության, մեռնող ու հարություն առնող բնությունը խորհրդանշող հորինվածքներ են, որոնք էլ ավանդաբար բնորոշ են եղել հայոց գորգարվեստին:

Այսպիսով, բանավոր, գրավոր ու պատկերային նյութերի ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրելու, որ.

ա. գորգը ի սկզբանե ծիսապաշտամունքային առարկա էր, և ներկայացնում էր մեր նախնիների աշխարհընկալումը, կյանքի հավերժության, մեռնող ու հարություն առնող բնության հետ կապված պատկերացումների առասպելաշարքը.

բ. ծիսապաշտամունքային գորդը ուներ կարմիր հիմնագույն: Վերջինս ավանդաբար առհասարակ բնորոշ էր հայոց դորդարվեստին.

դ. հայոց ավանդական ծիսապաշտամունքային համակարգում գորգի՝ իբրև կարևոր բաղադրամասի ներկայությունը վկայում է այդ առասպելականացված մշակութային տարրի անտարակույս տեղական ծագում ունենալու մասին: Ըստ որում, պետք է առանձնապես շեշտել, որ ծիսական գորգի հետ կապված հավատալիքները այնքան էին արմատավորված հա-

լոց պատկերացումներում, որ քրիստոնեության հայրերը հարկ են համարել դրանք հարմարեցնել պաշտոնական կրոնի հիմնադրույթներին.

դ. վերոհիշյալները, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում գրագործության հետ առնչվող հարմարանքների ու գործվածքի մ.թ.ա. IY-II հազարամյակներով թվագրվող նմուշների հայտնաբերման բազմաթիվ փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհը գորգի նախահայրենիքներից մեկն է:

ПО ПОВОДУ КУЛЬТОВО-РИТУАЛЬНОЙ ЗНАЧИМОСТИ КОВРА

АШХУНДЖ ПОГОСЯН

Резюме

Во многих традиционных обычаях и обрядах армян ковер фигурирует как культово-ритуальный предмет (обряд изготовления мирра, свадебные и похоронные обряды, обряд приема гостей и др.). В некоторых этнографических областях Армении кроме того пространство ковра(поле) ассоциируется с землей и называется "тап," что означает ровное поле, поверхность земли. Причем, это касается ковров красного цвета, что, как отмечают арабские источники IX – XI вв., присуще раннесредневековым армянским коврам. Обобщение историко-этнографических и изобразительных источников выявляет мифологический образ древнейшего ковра, который в мировоззрениях наших предков воспринимался сакральным пространством, источником жизни и вечности природы. Таким образом, первоначально ковер был культово-ритуальным предметом и считался табуированным сакральным пространством, предназначенным для восседания богов, а в дальнейшем – королей и элиты.

ON THE QUESTION OF THE CULT AND RITUAL SIGNIFICANCE OF THE CARPET

ASHCHUNDJ POGHOSYAN

Summary

In many Armenian customs and traditions carpet figures as a ritual and magic object (ceremony of the myrr preparation, rites of hospitality, etc). In some ethnographic regions of Armenia the space (field) of the carpet is associated with the earth and is called "Tap", which means even field, the earth's surface. It concerns the red carpets and, as the Arabian sources of IX – XI centuries mention, that is characteristic of early medieval Armenian carpets. Armenian carpets in general are characterised by their composition and ornaments. In this perspective a wide range of historical-ethnographical and iconographical sources reveal the mythological idea of the ancient carpet, which was perceived in our ancestors world as a space, the source of the life and of the Nature's eternity. So, originally, the carpets were cult-ritual objects. They were considered to be tabu-sacred space for enthronment of the gods and later – the kings and important persons.